


# MEET.ASNET.AM ՈՒՂԵՑՈՒՅՑ ԻՆՉՊԵՐՍ ՄԻԱՆԱԸ ԶԱՆԴԻՊՄԱՆ

1. Զանդիպման կազմակերպիչի ուղարկած հանդիպման հղումով մուտք գործելուց հետո կտեսնեք հետևյալ էջը: Նշված դաշտում գրեք Ձեր անունը, ապա սեղմեք

Join




**ՆՇՈՒՄ:** Եթե հանդիպումը դեռ չի սկսվել, ապա կտեսնեք հետևյալ էջը:

Զանդիպման սկսվելուն պես դուք ավտոմատ կերպով կմիանաք դրան:

**ՆՇՈՒՄ:** Եթե հանդիպման սենյակը ունի գաղտնաբար, ապա *միևչև անունը գրելը*, անհրաժեշտ կլինի մուտքագրել հանդիպման կազմակերպիչի կողմից նախապես ստացված գաղտնաբառը:

2. Զանդիպմանը սենյակ մտնելուն պես գուցե կարիք լինի տալ խոսախոդի (microphone) օգտագործման թույլտվություն, որից հետո անմիջապես կմիանաք հանդիպմանը:





3. Խոսափողը միացնելու/անջատելու (unmute/mute) համար սեղմեք կոճակը:

**ՆՃՈՒՄ:** Հնարավոր է հանդիպման մոդերատորը անջատի օգտագործողների խոսափող միացնելու հնարավորությունը: Այդ դեպքում դուք չեք կարողանա օգտագործել այս հնարավորությունը:



4. Հանդիպման ձայնը ամբողջությամբ անջատելու համար սեղմեք կոճակը: Կրկին միացնելու համար օգտվեք նույն կոճակից:



5. Տեսախցիկը միացնելու/անջատելու համար սեղմեք կոճակը:


**ՆՃՈՒՄ:** Գուցե կարիք լինի տալ տեսախցիկի օգտագործման թույլտվություն:  
**ՆՃՈՒՄ:** Հնարավոր է հանդիպման մոդերատորը անջատի օգտագործողների տեսախցիկ միացնելու հնարավորությունը: Այդ դեպքում դուք չեք կարողանա օգտագործել այս հնարավորությունը:

6. Ցուցադրվող պրեզենտացիան բացելու համար սեղմեք ներքևի աջ անկյունում



գտնվող կոճակը: Բացված պրեզենտացիան կրկին թաքցնելու համար սեղմեք պրեզենտացիայի վերևի աջ անկյունում գտնվող կոճակը:


7. Եթե մասնակիցների տեսախցիկների հետ միաժամանակ Էկրանին դիտում եք պրեզենտացիան, գուցե ցանկանաք փոքրացնել/մեծացնել դրանց չափերը: Դրա համարը մկնիկը պահեք պրեզենտացիայի և տեսախցիկների դաշտերի մեջտեղում, ինչպես պատկերված է նկարում, ապա սեղմեք և կարգավորեք չափերը՝ համապատասխանաբար մկնիկը վերև/ներքև տանելով:



8. Ձախ կողմում գտնվող վահանակում գտնվում են

- Միասնական չաթը (Public Chat),
- Միասնական նշումները (Shared Notes),
- Մասնակիցների ցուցակը (Users):

**ՆՇՈՒՄ:** Հնարավոր է հանդիպման մոդերատորը անջատի որոշ օգտագործողների Մյուս մասնակիցներին ցուցակում տեսնելու, Միասնական չաթում և/կամ Միասնական նշումներում գրելու հնարավորությունը:

9. Ամբողջ վահանակը փակելու համար սեղմեք  կոճակը:

10. Հանդիպման ընթացքում ձեռք բարձրացնելու համար մասնակիցների ցուցակում սեղմեք ձեր անվան վրա, ապա Set status, և ընտրեք Raise:



Ձեռքը իջեցնելու համար մասնակիցների

ցուցակում սեղմեք ձեր անվան վրա և սեղմեք Clear status




**ՆՇՈՒՄ:** Նույն կերպ, եթե կարիք կա, կարող եք ընտրել էմոջի կարգավիճակներ (emoji status):

11. Եթե ցանկանում եք անհատական չաթ ստեղծել որևէ մասնակցի հետ, սեղմեք այդ մասնակցի անվան վրա և ընտրեք Start a private chat:



12. Էջի վերևի ձախ հատվածում կտեսնեք այն մասնակիցների անունները, ովքեր խոսում են այդ պահին:



13. Եթե հանդիպումը ձայնագրվում է, ապա էջի վերևի հատվածում կտեսնեք այսպիսի ազդանշան:



14. Հանդիպումից դուրս գալու համար սեղմեք էջի վերևի աջ անկյունում

գտնվող  կոճակը, ապա Logout:

